Ուխտասարի ներառումը ՅՈՒՆԵՍԿՕ-ի համաշխարհային ժառանգության ցանկում որպես զբոսաշրջային ռեսուրսի կառավարման արդյունավետության բարձրացման միջոց

Մկրտչյան Ս. Ա.
Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական լեզվահասարակագիտական համալսարան (Հայաստան, Երևան)
serzh096@gmail.com

Վճռորոշ բառեր՝ Ուխտասար, ԲՀՊՏ, մշակութային ժառանգություն, զբոսաշրջային ռեսուրսի կառավարում

Внесение Ухтасара в список всемирного наследия Юнеско как средство повышения эффективности управления туристическим ресурсом

Мкртчян С.А.
Ереванский государственный университет языков и социальных наук имени В. Я. Брюсова, отдел электронного обучения и ресурсов (Армения, Ереван)
serzh096@gmail.com

Резюме: В статье представлен один из древнейших памятников Сюника – Ухтасар, как ресурс активного туризма, и предложен один из наиболее целесообразных способов управления этим ресурсом. Поскольку Ухтасар соответствует стандартам всемирного наследия ЮНЕСКО, нами был выбран именно этот способ продвижения данного ресурса, повышения его популярности и создания нового туристического предложения. Включение в Список всемирного наследия ЮНЕСКО, само по себе, является фактором, способствующим признанию туристического направления.
Ключевые слова: Ухтасар, культурное наследие, управление туристическими ресурсами, ООПТ

Inclusion of Ughtasar on the UNESCO World Heritage List as a Means of Improving the Effeciency of Tourism Resource Management

Mkrtchyan S.A.
Yerevan Brusov State University of Languages and Social Sciences, Division of e-learning and electronic resource (Armenia, Yerevan)
serzh096@gmail.com

Abstract: The article presents one of the oldest monuments of Syunik – Ughtasar, as a resource for active tourism, and it proposes one of the most expedient ways to manage this resource. Since Ughtasar meets the standards of the UNESCO World Heritage, we have chosen this means of promoting the resource, increasing its popularity and creating a new tourist offer. The inclusion on the UNESCO World Heritage List is, in itself, a factor contributing to the recognition of a tourist destination.
Keywords: Ughtasar, cultural heritage, tourism resource management, Protected areas

Հայաստանի Հանրապետությունը հարուստ է զբոսաշրջային յուրօրինակ ռեսուրսներով, որոնցից շատերը, ցավոք սրտի, օպտիմալ շահագործման չեն ենթարկվում և արդյունքում չի բացահայտվում դրանց թե՛ տնտեսական, թե՛ զբոսաշրջային ներուժը: Այդպիսի ռեսուրսների շարքից է Ուխտասար ֆիզիկաաշխարհագրական կառույցը: Այս ռեսուրսի շահավետ կառավարման ձևերը բազմաթիվ են և կարող են նշանակալի դեր ունենալ Սյունիքի մարզի ակտիվ զբոսաշրջության առաջխաղացման համար: Ուխտասարի հնավայրի ռեսուրսի կառավարման գործում ծանրակշիռ դեր կարող է ունենալ այս հուշարձանի՝ ՅՈՒՆԵՍԿՕ-ի մշակութային ժառանգության ցանկում ընդգրկելը: Վերոնշված ցանկում ընդգրկված օբյեկտները զբոսաշրջիկների համար մեծ գրավչություն են ապահովում. Օրինակ՝ ցանկում ներկայումս կարող ենք տեսնել Հայաստանի Հանրապետության տարածքում գտնվող Հաղպատ և Սանահին վանական համալիրները, Էջմիածնի մայր տաճարը, Զվարթ-

նոցը, Գեղարդավանքը, և սրանք Հայաստանի Հանրապետության ամենահաճախվող զբոսաշրջային դեստինացիաներից են:

Ինչպես արդեն նշվեց, Հայաստանի Հանրապետությունը, ի թիվս աշխարհի 167 պետությունների, Համաշխարհային ժառանգության ցանկում մի շարք օբյեկտների ընդգրկման պատվին է արժանացել, սակայն այդ օբյեկտներից ոչ մեկը «բնական» կատեգորիային չի դասվում, մինչդեռ Հայաստանի Հանրապետության բնաշխարհը լի է զարմանահրաշ վայրերով՝ բնության հատուկ պահպանվող տարածքներով, եզակի երկրաբանական հուշարձաններով, էստետիկական բացառիկ գեղեցկությամբ օժտված բնական տարածքներով, որոնց միջազգային հանրահռչակումը միանշանակ կբարձրացնի Հայաստանի Հանրապետության վարկանիշը, կխթանի զբոսաշրջության զարգացումը, կօժանդակի ազգային բնական ժառանգության պահպանության կարևոր գործում:

Հայաստանի Հանրապետության լանդշաֆտային համալիրների և նրանց առանձին բաղադրամասերի ծագումնաբանական, հասակային, ձևաբանական և այլ հատկանիշների մեծ տարբերությունները ստեղծել են բնության կենդանի և անկենդան հուշարձանների հարուստ բազմազանություն: Դրանցից շատերն ունեն միջազգային մեծ նշանակություն և համարվում են միջազգային չափանմուշներ (էտալոններ): Այսուհանդերձ բնության հուշարձանները դարձել են հատուկ պահպանվող տարածքների համակարգի առավել խոցելի օբյեկտը: Դրանք մեծամասամբ տեխնոգեն ներգործության հետևանքով (հանքավայրերի շահագործում, ծառահատումներ, հիդրոտեխնիկական ու այլ շինարարական աշխատանքներ և այլն) ենթարկվում են դեգրադացիայի և մատնվում անվերադարձ կորուստի:

Միջազգային փորձը ցույց է տալիս, որ համամարդկային արժեք ներկայացնող բնական օբյեկտների պահպանությունն ու դրա շնորհիվ՝ տարբեր երկրների զբոսաշրջային գրավչության բարձրացումը, լիովին հնարավոր է. դրա համար անհրաժեշտ է առանձնացնել առավել կարևոր ու արժեքավոր օբյեկտները, ապահովել դրանց պաշտպանության օրենսդրական հիմքերը՝ բացառելով անհետացման կամ վնասման վտանգը, և պետական մակարդակում վերահսկել օբյեկտի գոյատևման և պահպանման անհրաժեշտ պայմանները: Այս ուղղությամբ միջազգային համագործակցության առայսօր ամենահաջողված ձևավաչափը թերևս ՅՈՒՆԵՍԿՕ-ի Համաշխարհային ժառանգության պահպանության Կոնվենցիան է և այդ համաձայնագրով նախատեսված՝ Համաշխարհային ժառանգության ցանկում ձևավորման գործընթացը:

Մերձավոր Արևելքում նմանատիպ բնական օբյեկտի օրինակ է ՅՈՒՆԵՍԿՕ-ի Համաշխարհային ցանկում ընդգրկված Արևելյան Կովկասը, որը, հանդիսանալով Մեծ Կովկաս լեռնահամակարգի արևմտյան հատվածը, լեռնային զբոսաշրջությամբ զբաղվող զբոսաշրջիկների շրջանում մեծ ճանաչելիություն է վայելում: Այս տարածաշրջանում համապատասխանաբար զարգացել են ենթակառուցվածքներ, որոնք ապահովում են ակտիվ հանգիստ նախընտրողների համար բազմաթիվ ծառայություններ. օրինակ՝ ճոպանուղի, ձիերի վարձակալում, պառապլանային թռիչքներ, օդապարիկներով շրջագայություն, ուղղաթիռներից թռիչքներ, լողավազաններ, կորտեր և բազմաթիվ սննդի սպասարկան օբյեկտներ:

Սյունիքի ժայռապատկերները Հայաստանի Հանրապետությունում ամենաբարձրադիրն են (3000-3500մ) և միայն Սիսիանի շրջանի Ուխտասար ֆիզիկաաշխարհագրական կառույցում իրականացված լայնածավալ ուսումնասիրությունների արդյունքում գտնվել է ավելի քան 2 հազար նկարազարդ քար [2]:

Այս տարածքը գտնվում է ՀՀ Սյունիքի բարձրավանդակի կենտրոնական հատվածում, Սիսիանից դեպի հյուսիս-արևմուտք մոտ 30կմ հեռավորությամբ, ծովի մակերևույթից 3300մ միջին բարձրության վրա:

Երկրաբանական տեսանկյունից այս արժեքավոր հնավայրն իրենից ներկայացնում է պլիոցենի (5,3 – 2,5մլն տարի) և չորրորդական (2,5մլն տարի – մինչ այսօր) շրջանների հրաբխային լեռներով, բլուրներով շրջափակված տեղանք, ուր կան բազմաթիվ լճակներ, որոնցից մեկը գտնվում է անմիջապես երկգագաթ լեռան ստորոտում և լեռան անունով կոչվում է Ուխտասարի լիճ (երբեմն հանդիպում է նաև «Ուղտաջրեր» անվանումը): Ամբողջովին անտառազուրկ լանդշաֆտի հիմքը վերին

պլիոցենյան դոլերիտային[1] բազալտներն են, անդեզիտները[2] և այլ ապարները [1]: Այստեղի լեռնամարգագետնային ճմակալած հողերը ծածկված են ալպյան փարթամ բուսականությամբ: Ծովի մակերևույթից 2900-3300 մետր բարձրության վրա գոգ, հարթ և փոքրաթեք տեղանքներում փռված են բուսատեսակային հարուստ կազմ ունեցող ալպյան գորգերը: Լեռան ստորոտում, միջլեռնային հարթակներում, ձորակներում, լճակների ափերին լավային քարացրոններ են, որոնց բեկորների վրա էլ փորված են նախնիների գոյության վկայավեմերը: Տարածքը շուրջ 8-9 ամիս ծածկված է ձյան ստվար շերտով և ուսումնասիրության համար հասանելի է միայն ամռան ամիսներին:

Իծագրերի և ժայռապատկերների մշակույթը՝ ժայռափորագրման արվեստը Հայաստանի Հանրապետությունում, սկիզբ է առել տակավին մ.թ.ա. VII-V հազարամյակներում: Գոյատևել է մինչև մ.թ.ա. II-I հազարամյակները՝ աստիճանաբար իր տեղը զիջելով մեհենագրին, օտար ու տեղական սեպագրերին, նախամաշտոցյան հնչյունագրերին ու այբուբեններին, հետագայում էլ՝ հնչյունային գրերին [3]:

Այսպիսով, ժայռապատկերումը հայոց մշակույթի անբաժան մասն էր, հատկապես՝ նախագրային ժամանակներում: Հայոց աշխարհի ժայռապատկերները տասնյակ հազարներով սփռված են Հայկական լեռնաշխարհի և շրջակայքի բարձրալեռնային, ալպիական գոտու քարակուտակներում՝ 2000-3500մ բարձրությամբ:

Հայկական լեռնաշխարհի ժայռապատկերներն իրենց ծավալով, կատարման տեխնիկայով, նշանների բազմաքանակությամբ ու սյուժեների բազմազանությամբ աշխարհում նմանակը չունեն: Միաժամանակ, հայկական ժայռապատկերների որոշ առանձնահատկություններ թույլ են տալիս ենթադրել, որ ժայռապատկերային նշանները գործածվել են նախ որպես գիր, իսկ ամբողջական կոմպոզիցիաներն ունեցել են հոգևոր և ծիսական նշանակություն [4]:

20-րդ դարի սկզբից մինչև մեր օրերը Ուխտասարի ֆիզիկաաշխարհագրական կառույցը մշտապես գրավել է պատմաբանների, հնագետների, մշակութաբանների և այլ մասնագետների ուշադրությունը. այնուամենայնիվ Ուխտասարի հնավայրի վերաբերյալ պաշտոնական աշխհագրական (և ամենակարևորը՝ ոչ իրարամերժ) տվյալներ գտնելը գրեթե անհնար է: Ստացվում է, որ ժողովրդի կողմից ֆիզիկաաշխարհագրական կառույցին շնորհված անունը մինչ օրս պաշտոնապես ճանաչված չէ և ներառված չէ Հայաստանի Հանրապետության ֆիզիկաաշխարհագրական անվանումների ցանկում: Եթե փորձենք այս տարածքը՝ Ուղտասար կամ Ուխտասար տարբերակով, գտնել որևէ հանրամատչելի քարտեզի վրա, ապա դա մեծ դժվարություն կառաջացնի: Անվանումը, ոչ մի գրելաձևով, չի հիշատակվում անգամ 2007-2008թթ-ին հրատարակված Հայաստանի Հանրապետության ազգային ատլասի երկու վիթխարի հատորներում, որտեղ հարյուրավոր քարտեզներ ուղեկցվում են գիտական նկարագրություններով, բացատրական տեքստերով, գծապատկերներով ու լուսանկարներով: Բացակայում է այն նաև 2007թ-ին լույս տեսած Հայաստանի Հանրապետության Ֆիզիկաաշխարհագրական օբյեկտների տեղեկատու-բառարանում[3] [5]:

հայտագրումը՝ որպես ՅՈՒՆԵՍԿՕ-ի Համաշխարհային ժառանգության հավակնորդ-օբյեկտ, զանազան այլ տվյալներ է պահանջում: Մասնավորապես հույժ կարևոր է օբյեկտի անձնագրի առկայությունը, որը

---

[1] **Դոլերիտ** - հրաբխային ապար, բազալտի տեսակ: Կառուցվածքը բյուրեղային է՝ հրաբխային ապակու առկայությամբ: Առաջանում է բազալտային հալոցքի դանդաղ սառչելուց՝ խոշոր լավային հոսքերի կենտրոնական մասերում կամ երակներում:

[2] **Անդեզիտ** – հրաբխային միջին կազմության ապար՝ կազմված պլագիոկլազ, պիրոքսեն, ամֆիբոլ, բիոտիտ միներալներից, հազվադեպ՝ քվարցից ու հրաբխային ապակուց: Կառուցվածքը հոծ է, գույնը՝ սև, հաճախ՝ մուգ մոխրագույն:

[3] Սակայն, շփոթությունից խուսափելու համար, պետք է նշել, որ բառարանում ներկայացված են նույնանուն մի շարք այլ օբյեկտներ, դրանք են՝ **1. Ուղտասար լեռնագագաթը** (1879մ) Գեղարքունիքի և Կոտայքի մարզերի սահմանագլխին, Ջրառատ գյուղից 6 կմ հս-արմ., **2. Ուղտասար լեռնագագաթը** (3563 մ) ՀՀ Սյունիքի մարզի և Նախիջևանի սահմանագլխին, Զանգեզուրի լեռներում, Նոր Աստղաբերդ գյուղից 9,5կմ արմ., **3. Ուխտիսար լեռնագագաթը** (2951 մ) Վայոց ձորի մարզում, Թեքսարի լեռների հս-արլ. մասում, Ջերմուկ քաղաքից 7 կմ հս-արմ.:

պետք է պարունակի հետևյալ պարտադիր տեղեկությունները՝

1. անվանումը և դասակարգումը,
2. տեղադիրքը և աշխարհագրական ճշգրիտ կոորդինատները,
3. նկարագրությունը, չափագրությունը և վիճակը,
4. սահմանների և պահպանական գոտու նկարագրությունը, մակերեսը, քարտեզ-հատակագիծը,
5. տվյալներ սեփականատիրոջ և հողօգտագործման մասին,
6. պահպանության և օգտագործման ռեժիմի առանձնահատկությունները,
7. տվյալներ պահպանությունն իրականացնող սուբյեկտի մասին [6]:

Առաջարկի դեպքում այսպիսի անձնագրի ստեղծումը էլ ավելի է դժվարանում, քանի որ Ուխտասարի ֆիզիկաաշխարհագրական կառույցն իրենից ներկայացնում է հազարամյակների ընթացքում բնության և մարդու մշակութային գործունեության արդյունքում ձևավորված մի ամբողջական համալիր, որը վստահաբար կարելի է անվանել <u>ԲՆԱՊԱՏՄԱԿԱՆ ԼԱՆԴՇԱՖՏ</u>: Նախ անհրաժեշտ է պետական մակարդակում հաստատել բնության հատուկ պահպանվող տարածքի այս կատեգորիան, որն իր հերթին կհանգեցնի որոշակի օրենսդրական փոփոխությունների: Այդ փոփոխությունները միանգամայն արդարացված կլինեն, քանի որ նմանատիպ հնավայրերը սփռված են Հայաստանի Հանրապետության ողջ տարածքով, և Ուխտասարի կատեգորիայի հաստատումը Հայաստանի Հանրապետությունում <u>բնապատմական լանդշաֆտների համակարգի</u> ստեղծման, պահպանության և վերահսկելի զբոսաշրջության շրջանակներում դրանց առավել արդյունավետ օգտագործման համար անհրաժեշտ նախադեպը կդառնա:

Հասկանալի է, որ նման բարդ օբյեկտի անձնագրում կտրուկ կավելանան պարտադիր տվյալների կատեգորիաները՝ պահանջելով լանդշաֆտային համալիրի բոլոր բաղադրիչների մանրակրիտ չափագրումներ, գիտականորեն հիմնավորված նկարագրություններ և գնահատականներ, հնարավոր է՝ տարբեր բաղադրիչների համար պահպանության տարբեր ռեժիմների սահմանում և այլն: Այս ամենը կպահանջի տնական փորձագիտական աշխատանք՝ տարբեր ոլորտների հեղինակավոր մասնագետների ներգրավմամբ:

Ազգային մակարդակում վերը նշված գործընթացներն ավարտելուց հետո միայն հնարավոր կլինի ներկայացնել Համաշխարհային ժառանգության ցանկում Ուխտասարի բնապատմական լանդշաֆտի ընդգրկման հայտը:

Հաշվի առնելով առաջարկվող օբյեկտի համալիր բնույթը՝ կպահանջվի օբյեկտը համապատասխանեցնել Կոնվենցիայով նախատեսված թե՛ բնական, թե՛ մշակութային չափանանիշների՝ հավակնելով ստանալ այսպես կոչված «խառը» (mixed) օբյեկտի կարգավիճակ: Կարծում ենք, Ուխտասարի բնապատմական լանդշաֆտը կարող է համապատասխանել Կոնվենցիայի առնվազն չորս հետևյալ չափանիշներին [7].

II. Օբյեկտը վկայում է տվյալ ժամանակահատվածում կամ որոշակի մշակութային տարածության մեջ մարդկային արժեքների նշանակալի ազդեցության մասին:

III. Օբյեկտը հանդիսանում է յուրօրինակ կամ բացառիկ այն քաղաքակրթությունների կամ մշակութային սովորույթների համար, որոնք դեռ գոյություն ունեն կամ արդեն անհետացել են:

VII. Օբյեկտն իրենից ներկայացնում է բնական ֆենոմեն կամ բացառապես բնական գեղեցկություն և էսթետիկ կարևորություն ունեցող տարածություն:

VIII. Օբյեկտը հանդիսանում է երկրի պատմության կարևորագույն փուլերի վառ օրինակ, այդ թվում՝ անցյալի հետքերի, ռելիեֆի առաջացման հետևանքով տեղի ունեցող երկրաբանական պրոցեսների խորհրդանիշ, գեոմորֆոլոգիական կամ ֆիզիոլոգիական առանձնահատկությունների խորհրդանիշ:

Վերլուծելով նաև ՅՈՒՆԵՍԿՕ-ի կոնվենցիան և համաշխարհային ժառանգության ցանկում ընդգրկման հայտի լրացման համար անհրաժեշտ գործողությունները՝ պարզվեց, որ Հայտի ամբողջական փաստաթղթերի փաթեթ ստեղծելու համար մենք այսօր չունենք պաշտոնական համապատասխան բոլոր տվյալները, ինչը պայմանավորված է ընտրված օբյեկտի ՀՀ բնության հուշարձանների ցանկում ընդգրկված չլինելու և պետական անձնագրի բացակայությամբ:

Ուխտասարի ֆիզիկաաշխարհագրական կառույցը բացահայտման, ուսումնասիրման,

Հայաստանի Հանրապետության հանրությանն ու ախշարհին պատշաճ կերպով ներկայացնելու կարիք ունի:

Համաձայն Կոնվենցիայի սկզբունքների, Ուխտասարի կարգավիճակը՝ որպես համաշխարհային ժառանգության օբյեկտ, տվյալ տարածքին կտա հետևյալ կարևոր առավելությունները՝

1. յուրօրինակ բնական համալիրի ամբողջականության և պահպանվածության ապահովման լրացուցիչ երաշխիքներ,
2. տարածքի և այն կառավարող հաստատությունների վարկանիշի բարձրացում,
3. ցանկում ընդգրկված օբյեկտի միջազգային հանրահռչակման ու բնօգտագործման այլընտրանքային տեսակների զարգացման (առաջին հերթին էկոլոգիական զբոսաշրջության տարբեր ուղղությունների) խթանում,
4. Համաշխարհային ժառանգության օբյեկտի պահպանմանն ուղղված անհրաժեշտ ֆինանսական միջոցների ներգրավման նախապատվության ապահովում (առաջին հերթին Համաշխարհային ժառանգության հիմնադրամից),
5. յուրօրինակ բնական համալիրի տարրեր հանդիսացող՝ բնական և մշակութային օբյեկտների պահպանվածության և այլընտրանքային բնօգտագործման մշտական վերահսկողություն (մոնիթորինգ):

Ուխտասարի՝ բնության հատուկ պահպանվող տարածքի կարգավիճակ ստանալը կդառնա գործիք, որի միջոցով ավելի դյուրին կլինի վիճակագրական տվյալների հավաքագրումը (հատուկ անցակետերի միջոցով): Յուրաքանչյուր ամիս զբոսաշրջության վերաբերյալ տվյալների հավաքագրումը, այսուհետ թույլ կտան գնահատել զբոսաշրջության զարգացման տեմպերը Ուխտասարի տարածքում և համեմատել այլ զբոսաշրջային դեստինացիաների վիճակագրական տվյալների հետ, որն իր հերթին կնպաստի շուկայում առկա առաջարկների բարելավմանը: Այս փորձը կօգնի մեզ զբոսաշրջային վիճակագրության կառավարման տեսանկյունից նմանատիպ մեխանիզմներ կիրառումը այն բնության հատուկ պահպանվող տարածքների հարցում, որոնք ենթակա են զբոսաշրջային շահագործման. ներկայումս ՀՀ-ում գործում են 33 ԲՀՊՏ-ներ՝ 3 պետական արգելոց, 26 պետական արգելավայր, 4 ազգային պարկ և բնության 230 հուշարձան [8]:

Սյունիքի մարզում արդեն իսկ մեծ է զբոսաշրջային ակտիվությունը, քանի որ այն հարուստ է բազմաթիվ մշակութային և բնական հուշարձաններով: Սակայն Ուխտասարը, որն ունի զբոսաշրջային ահռելի ներուժ, շահագործման է ենթարկվում քչերի կողմից: Արդեն իսկ իմանալով, թե ինչ է իրենից ներկայացնում Ուխտասարը, դժվար չէ կռահել թե ինչ ազդեցություն կունենա դրա շահագործումը Սյունիքի մարզի զբոսաշրջության վրա: Մարզը իհարկե հարուստ է մշակութային և բնական հուշարձաններով, որոնցից են օրինակ Տաթևի վանական համալիրը, Հին Խնձորեսկի բնակատեղին, Քարահունջը, Շաքի ջրվեժը, սակայն սրանք նպատակահարմար չեն՝ որպես ակտիվ զբոսաշրջության դեստինացիաներ շահագործմանը: Իհարկե Սյունիքի մարզում է գտնվում նաև Խուստուփ լեռնագագաթը, որը ակտիվ զբոսաշրջություն նախընտրողների համար իդեալական թիրախ է հանդիսանում և մեծ պահանջարկ ունի նրանց կողմից: Մարզում ևս մեկ այդպիսի դեստինացիայի առաջարկը թիրախային լսարանին կընձեռնի հայկական նախնադարյան մշակույթին և բնակլիմայական պայմաններին ծանոթանալու հնարավորություն, և կտա առաջարկի ընտրություն:

Գրականության ցանկ

1. Ա. Ավանեսյան, Է. Մալխասյան, Ս. Նազարեթյան, «Հայաստանի երկրաբանական եզակի հուշարձանները». Երևան 2000թ.
2. Գ. Կարախանյան, Գ. Կարապետյան, Պ. Սաֆյան, «Սյունիքի ժայռապատկերները», Երևան, 1970թ.
3. Կ. Թոխատյան «Ժայռապատկերները որպես պատմության սկզբնաղբյուր» - հարցազրույց ՀԱՅԱԳԻՏԱՐԱՆ. ՀԱՅԱՍՏԱՆ՝ հայագիտության և հայապահպանության կայքում. 23.02.2014
4. Հ. Մարտիրոսյան. «Հայոց Առաքելական պատություն» աշխատություն,
5. Հայաստանի Հանրապետության Ֆիզիկաաշխարհագրական օբյեկտների տեղեկատու-բառարան, Երևան, 2007թ
6. ՀՀ բնապահպանության Նախարարություն
7. Համաշխարհային ժառանգության չափորոշիչներ, http://whc.unesco.org/en/criteria/
8. ՀՀ կառավարություն որոշում, «ՀՀ բնության հատուկ պահպանվող տարածքների ռազմավարությունը, … բնագավառում պետական ծրագիրը եվ միջոցառումները հաստատելու մասին» 6.10.2014.